

1891

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՇԱՐԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԽԹ

ՅՈՒՂԻՄ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԱՅ-ՎԵՆԵՏ

(Տիս յ'էջ 81)



Եղա անդամ խնդիր եղած է յատենի ծերակուտին վենետիկոյ՝ Հայոց եկեղեցւոյն շինութեան ոկրզբնաւութեան վրայ յայնմ քաղաքի, և չեն կրցած ստոյգ թուականը գտնել զի յայտնի վկայութիւն մը կայ առ այն, ինչպէս հիւրանոցին՝ զոր տեսանկք. բայց տունէն աւելի կարեսոր է մեղ գիւտ եկեղեցւոյն, վասն զի կեղրոն կամ միութեան կէտ մ'է այն ազգին՝ որոյ համար կը կանգնուի. և ի միւս կողմանէ՝ հաւաստեաւ գիտեմք, որ Հայք չէին հանդուրժեր, թէպէտե սակաւաւորք թուով, տեղ մը բնակութիւննին հաստատել առանց ազգային եկեղեցւոյ. և այս պատճառաւ իրենց համար մասնաւոր եկեղեցիք կառուցած են մինչև ի Սիկիլիա կղզւոյ. և որովհետեւ ի վենետիկ յաճախագոյն էին թուով, հաւանական է թէ վաղագոյն ձեռք զարկած ըլլան եկեղեցւոյ մը կամ գէթ մատրան հաստատութեան, կը տեսնեմք դարձեալ՝ որ ի Հռովմ, ի Փլորենտիա, յԱնդոնա, ի Ուիմինի՝ և այն, երեքտասաններորդ դարու կիսուն, կամ անկէ ալ յաւաշ, և հետեւեալ չորեքտասաններորդին սկիզբը ի Պոլոնիա, Ֆերրարա, Ճենովա, Պատուա, ոչ միայն եկեղեցի՝ այլ և վանկ կ'անուանին հոգետունք Հայոց, որ կը նշանակէ զբազմութիւն կամ զմիաբան բնակութիւն եկեղեցականաց, կամ գէթ եղբայրաբար

միաբանակեցից . որով հարկ կ'ըլլայ ենթադրել թէ ամենայնիւ՝ ու
առաւելագոյն կերպով նոյնպէս եղած ըլլայ և ի վենետիկ :

Ասով հանդերձ զարմանալի է, որ մինչ այդ քաղաքաց պատմա-
զիրք և յիշատակագիրք ճիշդ՝ կամ մերձաւորապէս կը յիշեն Հայոց
եկեղեցեաց շինութեան կամ անոնց բարսեղեան միանձանց գալըս-
տեան ժամանակը, վենետիկոյ տարեգիրք այդպիսի յիշատակութիւն
մը չեն ըներ, բաց ի յառաջ մեզմէ յիշուած Ծիանիի բարերարական
կտակէն, որ չէ նման այլոց, այլ աւելի հիւրանոց կամ բնակարան
մը : Խօսքերնիս չերկարելու համար փութանք և սել, թէ հարկ էր
որ ի Ս. Յուլիան թաղի գտնուած Հայոց տանը մէջ ըլլար գոնէ
ձեացեալ մատուռ մը, ինչպէս շատերը կը կարծեն, և կամ ու-
րիշ տեղ Հայոց վանատուն մը կար: Եթէ նոյն թաղին մէջ կայր
այդպիսի մատուռն, ինչպէս ինձ ալ հաւանական կը թուի, այլ հա-
ւանականագոյն եւս՝ թէ փոքր ու անշուք շինութիւն մ'էր, որ երկիցս
և երիցս ընդարձակուելով (ի 1494, 1510-20, 1689), տակաւին
և այժմ փոք իկ եկեղեցեակ մ'է, թէպէտ և չքնազ գոհար մը . ուս-
տի ինչպէս յայլ քաղաքս իտալիոյ կը գտնենք, պէտք է փնտուել և ի
վենետիկ մեծագոյն եկեղեցի մը և Հայոց միաբանք, երդմնեցուցա-
նելով անէն դիւան և յիշատակարան : Մի կամ երկու նշոյլք միայն
կը ծագեն ինձ՝ առհաւատաշեայք այլոց . որոց փափաքելի զիւտի յա-
ջողութիւն մնայ աւելի քան զիս բազզաւոր և քննասէր հետամտից :
Մի ի նշուլիցս է՝ քանի մը խօսք Ծահնինի Տիպարա անունով մէկու մը
կտակին ի 1348, յունիս 26, Ռիալդոյի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ
Օնեիպէն թաղերիցու գործոց (actes) մէջ, որ ւրիշ բարերարական
տուրքերէ զատ կը պատուիրէ տաւ Հայ Եղբարց Սրբոյն Յովհաննէնու
Մկրտչի հինգ տուկատ, իրենց ապրուսափ համար¹: Կային ուրեմն
Հայ Եղբարք միաբանակեցք ի վենետիկ Ժդ գարու կէսէն ալ յա-
ռաջ . բայց ուր էր այդ Ս. Յովհաննու Մկրտչի անուան ու պաշտա-
ման նուիրուած եկեղեցին . արդեօք իրեն համար յատուկ եկեղեցի
մ'էր, ինչպէս կարծեմ, (որովհետեւ շատ սիրող են Հայք այդ Սրբոյն),
թէ լատին եկեղեցեաց մէկը, յորում թաղի գտնուէր և վանա-
տունն և եկեղեցի Հայոց . զայս ամենայն պիտի ցուցընեն անշուշտ
ապագայ դիւանական զիւտք և յայտնութիւնք : – Ս. Յուլիոնոսի
թաղին մէջ եղող Հայոց եկեղեցւոյն վրայ, որ գէթ յառաջ քան ըզ-
կէս Ժէ գարու, յամի 1434, կը յիշուի պաշտեալ և պատարագօք,
և միշտ Ս. Խաչ կը կոչի և պաշտի մինչեւ ցայժմ, քիչ ետքը նորէն
պիտի գառնանք խօսելու:

Յիշենք աստէն թէ յեկեղեցւոյ անանջատ է և հաւատացելոց յե-
տին հանգստարանն . չենք ըսեր նիւթական կցորդութեամբ, թէպէտ

1 Ai Frati Armeni di S. Giov. Battista D^o cinque per so viver.

և յաճախս այնպէս ալ է, — այլ սեպհական հոգեսր առընչութեամբ. վասն զի առանձին ազգային եկեղեցի մը ունենալ փափաքողք, առանձին գերեզմանատուն ալ կ'ուզեն: Բազումք ի Հայոց՝ Սուրբ Խաչ եկեղեցւոյ վերջին շինութենէն եռքը հոն ալ թաղուած են, և կը վկայեն իրենց մահարձանք. շատք ալ ժԶ-ժԸ գարուց մէջ թաղուած են յայլեայլ եկեղեցիս քաղաքին, ինչպէս յայտնի է թաղպետական եկեղեցեաց մահաբանութեանց գրքերէն, տեղ տեղ ալ յարձանագրութեանց որ դրուած են իրենց գերեզմանաց վրայ. բայց աւելի յառաջ դարուց մէջ, երբ Հայք աւելի պնդութեամբ կը պահէին իրենց ազգային ծէսերը, հարկ էր որ առանձին գերեզմանատուն մ'ալ ունենային. և էր ի Սուրբ Գէորգ կղզւոյ, քաղաքին մօտ: Մեծ վիճի մը առթով՝ զոր ունեցեր են Հայք Սրբոյն Գէորգեայ թենեղիկտեան մենաստանին կրօնաւորաց հետ, յամի իրը 1675, կը պնդէին մերքն թէ չորս հարիւր տարուընէ ի վեր շնորհուած էր իրենց հոն ազգային հանգստարան մը ունենալու իրաւունք. և անժխտելի գրաւոր յիշատակ մը, որոյ վրայ քիչ ետքը պիտի խօսինք, կը վկայէ 1843 թուականին՝ որ ի հնուց հոն էր Հայոց գերեզմանատունը:

Ո՞ւր են ապա քարինքն և արձանիք որ իրապէս վկայեն այս կարծեաց ստուդութեան: — Հարկ է խնդրել փնտուել զանոնք կամ ի հիմունս գեղեցիկ Զանգակատանն, զորով կը շրջապատէին գերեզմանքն ու բակն ու ջրհորը Հայոց անուամբ կը կոչուէր, և որ անցեալ (ժԸ) դարուն կործանելով, ջարդեց խորտակեց քարինքը, ունոր զանգակատան հիմնարկութեան ծառայեցոյց. միայն քանի մը քարինք զերծան, ոչ շատ հինք, այլ ժԶ-ժԸ գարուց, որոց վրայի արձանագիրերը ընդօրինակեցին Հարք Ռւստիս, երբ սովորեր էին Հայք Վենետիոյ զանազան եկեղեցեաց մէջ թաղուիլ. և այն սակաւաթիւ մը նացած մահարձանք ալ առաջնոց բաղդը կամ կորուստը ժառանգեցին՝ Սրբոյն Գէորգայ եկեղեցւոյն սալայատակին նորոգմանը ատեն: Ռսանկով Հայոց կենդանութեան կամ մեռելութեան հետքն ալ չմնաց ի կղզւոյն, բաց ի վերը յիշատակուած քանի մի արձանագրութիւններէն: Մաղթելով վայրիկ մի հանգիստ՝ հանգուցելոցն ի վաղուց, գառնանք միւսանգամ առ կենդանիս:

* * *

Վենետիկ եկող յանուանէ ծանօթ Հայոց մէջ, բաց ի յոյժ հնագունից որոց վրայ խօսեցանք ի սկիզբն այս մեր գրուածոյս, առաջին կը յիշուի Մանուշէլ դեսպան Սմբատոյ թագաւորի ի վերջկոյս երեքտասաներորդ դարու (1297-8), որ բաց յայլոց իրաց՝ եկեր էր և ի խնդիր դիպակաց, ինչպէս յառաջագոյն ալ ըսինք: Իրմէ յառաջ,

ինչպէս ետքն ալ եկողաց շատերուն անուանք չեն յիշատակուիր . և զորս զանց կ'ընենք մէջ բերել ինչպէս ի դիմաց դքսին անոնց շը-նորհուած պարգեք , և զոր գեսպանաց ձեռքով կը զրկէին տռ թա-գաւորս Հայոց : — Զորեքատասաներորդ դարուն սկիզբը (1302 սեպ-տեմբեր 23) թոյլ կու տար ծերակոյտն՝ վենետիկեան նաւերով քա-նի մը վաճառականաց դալ այսր . ասոնց մէջ կը յիշուին Լեռն , Սիմոն և Գէորգ հայ : — 1334 թուականին կը յիշուի Հերում անու-նով յանցաւոր մը ի վենետիկ , և որոյ չնորհեցաւ ազատութիւն ի դատէ . այլ թէ ինչ յանցանքի համար , և ինչ ելք ունեցաւ , շնոք գիտեր : — Նոյն միջոցներուն տեսանք , ինչպէս ի վեր անզր , զԱւագ Գալամաչի թարգման և կարաւանապետ մը ի վենետիկ : Անկէ ետ-քըն է թագաւորազանց և թագաւորականաց ոմանց գալուստն ի վե-նետիկ . ինչպէս Լիւզինեան Պետունիունի , որ և մեռաւ (1364) անդէն և թերեւս թաղուեցաւ ի Ս . Գէորգ . ու Վրան քսան տարի անցնելին ետքը՝ իր եղբօրն Լեռնի՝ թագէն զրկուած և ի խնդիր թագի ստուե-րակերպ անցքն ընդ վենետիկ (1383) :

Այս վերջին Լեռնի վենետիկ եկած տարին՝ հօն կը բնակէր Եղբայր Օգոստինոս ոմն էրդիրումցի հայ դոմինիկեան կրօնաւոր , յառաջն Աւետիք կոչուած , ուր և կ'ընդօրինակէր զնախաղրութիւնս հայերէն Ս . Գրոց , աւելցընելով յիւրմէ պէսպէս կրօնական բանս յարձակ և յոտանաւոր , և որոյ գրչագիրը ձեռուընիս է : Աս զրուած-քին մէջ նշանակութեան արժանաւոր կէտ մը և կարենոր մեր առաջ-արկութեան այն է , որ կ'ըսէ թէ գրած կամ աւարտած է զայն ի 29 փետր . նահանջ ամի ի վրանէդոյ եկեղեցին : Ո՞ր եկեղեցի էր զոր կուզէ ակնարկել զրիչն . եթէ զմի ի լատին եկեղեցեաց , առանց տարա-կուսելու՝ ինուիրական տաճար Սրբոյն Մարկոսի պէտք է յառել զակն . սակայն Հայոց մէջ այնքան հռչակուած էր անոր անունը (San Marco) , որ եթէ զրիչն զայն ակնարկել ուզէր՝ յանուանէ ալ կը զրէր . ուստի պատշաճ թուի կարծել թէ կամի վեր անդր՝ 1348ին յիշուած եկեղե-ցին կ'իմանայր՝ ուր Հայ Եղբարք կը բնակէին , մանաւանդ զի ինքն ալ կրօնաւոր էր և դոմինիկեան , և կիսով զարու յառաջ հաստատուած էր Սրբոյն Դոմինիկոսի կանոններով Հայոց Ունիթորաց միաբանու-թիւն մը , և տարագէպ չէ կարծել թէ անոնցմէ ոմանք կանխած ե-կած ըլլան նաև ի քաղաքս , ինչպէս այլք ալ արդէն անցել էին ի կաֆա . և կամ պէտք է համարել զեկեղեցի Ս . Խաչի , ենթադրելով թէ այս անուամբ ալ կոչուած ըլլայ , այն որ մերձ է Հոգետան և փո-ղոցի Հայոց , ի թաղերիցութեան Ս . Յուլիանոսի , առ որ միւսանգամ գառնանք և կնքենք խօսքերնիս :

* * *

Սրբոյն Յովհաննու Հայ Եղբարց յիշատակութենէն քանի մի տարի յառաջ (1344 հոկտ. 2) Ա. Յուլիան եկեղեցւոյ Յակոբ Մարքէզինի քահանայի ձհռքով զրուած կտակ մը կայ, Հայոց տան (Ca Armena) մէջ բնակող կնոջ մը, Armina կոչուած եւ Մարիամ անունով. և որ ինքզինքը կը կոչէ ի կտակին Massaria domus Armenorum, որ ոչ թուի ինձ աղախին լոկ՝ որպիսի նշանակութիւն ունի արդի գաւառական լեզուի մէջ այդ masserā բառն, այլ իրրե տանտեսաւ (massaja կամ այս) տանն Հայոց. և այս առաջին անգամն է, գէթ ինձ ծանօթ յիշատակագրաց մէջ, Հայոց տան յիշատակութիւնը՝ Ծիանիի կտակէն ետքը. վասն զի Հայ աղգայնոց առաջին և միակ հին կտակն է՝ զոր յաջողեր ենք գտնել ի դիւանս Նօտարաց. բայց բաւական նշան մը թէ անկէ յառաջ ու ետքն ալ գրուած պէտք էին ըլլալ այդպիսի վաւերականք, և որոց գիւտը փափաքելի է. զի թէպէտ կտակք են և մահու յիշատակաւ առթեալ, այլ կրնան ընծայել մեզ շատ կարեոր և անտխուր տեղեկութիւնս, ինչպէս այս՝ որոյ խօսքը կ'ընենք, ըստ բազում գլխոց պատուական է և հմտացուցիչ կտակողն Մարիամ՝ աղգէն զատ շի յիշեր ոչ զծնողս և ոչ զազգականս. և ըրած մանր մունր մէկուն կամ մէկալին թողած դրամք կը գումարին ի հարիւր տու կատա և յերկու ֆիորին՝ անշուշտ յոսկի դրամս. որով կրնայ են թաղրուիլ թէ հասարակ աղախնէ մը բարձր վիճակ ունէր, աւելի բարեկեցիկ. և կը պարապէր ի դարման տեսակ տեսակ հաւուց, և այն միջոցով կը հայթհայթէր անշուշտ իր պարէնը և կենաց դիւրութիւնն իր կտակին առթիւ մեզի թողած կարեոր գիտելին՝ Հայոց տան մէջ և թերեւս անկէ գուրս բնակողաց ութ կամ տասն աղգայնոց անուանք են զորս կը յիշէ. արք, կանայք և Եղբարք. և յորոց իրեն կտակակատար կը սահմանէ, և են. Եղբայր Միքայէլ Հայ, տիկին Բարրուղիմէ Հայազգի (Domina Bartholomia Armina), և որոյ ֆլորին մի յիշատակ կը թողու. իսկ առաջնոյն երկու ֆլորին և սեաւ պատմուճան մը. Յակոբ կտակակատարին չորս տուկատ և արդէն ձեռքն եղած գրաւականը. Նօտարին՝ ֆլորին մի, կը յիշէ ուրիշ Հայ Եղբարք, գուղիելմ (Vielmo) և Եղեկիել, նշանակելով անոնց բնակութիւնն ի տան Հայոց, և կը թողու առաջնոյն չորս ֆլորին իսկ միւսոյն երկու ի կանանց՝ բաց ի Բարթուղիմէէ, զոր յիշեցինք, կ'անուանէ զջապել, որ Հայոց Սիսուանեայց մէջ յաճախեալ անուն մ'էր ի ժամանակին, մանաւանդ առ աղնուականս. և բնակութիւն նորա էր ի Հայտան. որուն կը կտակէ իր կրկնոցը և սպիտակ պատմուճանը (mantello, tunica alba) և տուկատ մը գրամ. Նոյնպէս ի Հայտան բնակող Գալլի կնոջ մը կը թողու իր զգեստները (i suoi panni) և վեշտասան փոքր գրամ (soldi). Յիշենք անցողաբար որ այն ատեններու կտակաց մէջ յաճախ կը տեսնուի բառդ գալի, և կարծեմ թէ ստրուկ - կանայք կը նշանակէ: Փրանկիսկա (Francisca) Հայ կնոջ

մալ կը թողու ֆլորին մի . սա չէր ի բնակչաց Հայտան, այլ ի Ս. Վլաս (Sancti Blasii), ոչ գիտեմ յաշխարհական տան թէ ի մենաստանի : Ամէն բանէ յառաջ՝ իրր բարի քրիստոնեայ՝ իր ընչից տասանորդը կու տայ (In primis omnium rectam dimitto decimam). և վերոյգրեալ քահանայից և հայ եղբարց թողածէն զատ, կը կտակէ Ս. Յուլիանոս եկեղեցւոյ քահանային երկու տուկատ վասն մատուցման պատարագաց, նոյնպէս սրբոյն Մարկոսի քահանայից երկու տուկատ. տուկատ մալ կուսանաց սրբոյն Զաքարիայ, որ Յիւզանդիոնի հայ կայսեր մը տրովք կառուցուած եկեղեցի է, ու վիրջին գարուց մէջ դեռ եւս կային հոն և հայազգի կուսանք, և թերեւս այս կտակս ընող Մարիամայ ժամանակն ալ : Հայոց տանն ալ՝ ուր կը բնակէր, կը թողու ութ ֆլորին, որպէս զի պէտք եղած նորոգութիւնն ընեն, որոյ կ'երենայ կարօտ ըլլալն, և անշուշտ Ծիաննեայ տուրքն չէր բաւեր ծախքը գոցելու : Զիմունար Մարիամ և այլ ազգային տուններն, եկեղեցիք և վանորայք որ յայլեայլ քաղաքս իտալիոյ, բարեպաշտութեանը հետ անշէջ պահելով նաև զհոգի ազգային . և կը կտակէ Հայոց տանց որ ի Պոլոնիա, Փերուճիա, Սիենա և Գենուա՝ երկու տուկատ կամ ֆլ. իսկ հոգետանն որ ի Զիվիդավէզզիա (Urbe veteris) մէկ տուկատ :

Իրմէ բարերարելոց մէջ նշանաւոր է Արքեպիսկոպոսն Հայոց, ճոխամասն կտակաւ, որուն կը թողու արգէն փոխ տուած երեսուն տուկատը, ու իրմէ առած գրաւականն, աւելցընելով ասոնց վրայ տասն ֆլորին ալ : Ա.փսոս որ յանուանէ չիյիշատակեր զնա . բայց լոկ Հայոց արքեպիսկոպոսի կոչումն ալ նշանական է . և իրաւամբ ենթադրել կու տայ թէ վենետիկոյ՝ կամ յաւէտ իտալիոյ Հայք եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս մը ունէին, և որոյ ամուն էր այն քաղաքաց մէկուն մէջ՝ յորս Հայոց հոգետունք կամ վանորայք կը գըտնուէին: Ուրիշ թէ ազգային և թէ օտար յիշատակարաններէ զիտենք թէ այն ատեններն թովմաս անունով հայ եպիսկոպոս մը կայր, որ եպիսկոպոս իրալիոյ կը զրէ և կը կոչէ զանձն . կոչումն պանծալի, որով հաւանաբար կրնայ կարծուիլ թէ յիշեալ քաղաքաց մէջ, նաև ի Հռովմ գտնուող գաղթական Հայոց վերադիտող մ'էր: Իր վենետիկ ըլլալուն վկայութիւն մը կայ, ուստի մագաղաթ (գրուած թէ անգիր), կը զրկէր առ կոստանդին կաթողիկոս (1374-84): Վախճանած և թաղուած է թովմաս ի Փերուճիա (1385), ինչպէս կը տեսնուի ի տապանագրէն ի սուրբ Մատթէոս եկեղեցւով քաղաքին . և որովհետեւ քառասունեհինգ տորուան միջոց կայ ընդ մահ թովմայի և Մարեմայ, մարթ է կարծել թէ ուրիշ մ'ըլլայ ասոր յիշած եպիսկոպոսը, թերեւս նախորդն թովմայի . մանաւանդ զի յայնմ դարու յաճախ կը հանդիպէին այցելութիւնք եպիսկոպոսաց Հայոց ի Հռովմ, ի Պոլոնիա, ի Փլորենտիա և վենետիկ . և կտակիս զրուելուն ժա-

մանակ եպիսկոպոսին ի վենետիկ դանուելուն նշանակ մ'ալ՝ ոչ
միայն փոխառութիւնն և գրաւական տալն է, այլ և կտակողին կող-
մանէ ձգուած ուրիշ պարզ մ'ալ, երեք սիրամարգ. ինչպէս մէկմէկ
սիրամարգ ալ Յակոբ քահանայի, և որոյն Մարկոսի եկեղեցւոյ
պահապան Փրանկիսկոս քահանայի, ուրիշ մ'ալ իր հոգւոյն, որ-
պէս զի մնացած Հաւեղէններով զոր կը թողուր, հոգեհաց ու-
րախութիւն մը ընեն (de omnibus meis galinis fiat unam charitas) իր
մահուան օրը: Ճամը տուկատ ալ կը սահմանէ, որպէս զի այն գու-
մարով ողորմութիւն ընեն ի նպաստ հոգւոյն (volo fiet unam e aris-
tatem) կտակակատարաց որոշմանն համեմատ, որոց և կը յանձնէ
իր ամէն շարժուն և անշարժ ընչից մնացածը բաշխել վասն իր
հոգւոյն. որով կ'իմացուի թէ ըստ մարմնոյ ժառանգ չունենալուն՝ կը
ժառանգեցընէ, իր հոգին:

Սակայն Հարկ էր մարմնոյն համար ալ հանգստարան մը ցուցընել-
զոր և կը նշանակէր ի կտակին, և անով կը հաստատէր մեր յառա-
ջագոյն ըստածը, թէ երեքտասաններորդ գարէն ի վեր Սրբոյն Գէոր-
գայ կղզւոյն մէջ էր Հայոց հանգստարանը, ուր և ինքն Մարիամ ու-
զեց թաղուիլ. ու տեղւոյն վանականաց երկու տուկատ պատարա-
գիք թողլէն զատ, կը կտակէր մեծ կրկնաջահ մը (doppiere) Սրբու-
թեան սրբոց ի պատիւ մամեղէն վառելու, և ուրիշ մ'ալ Սրբոյն Յու-
լիանու եկեղեցւոյն: Ճրագարանաց այս յետին յիշատակք, ի Ս. Գէ.
որդ թաղումն, լատին այլեայլ եկեղեցեաց պատարագիք, երկրայելի
կ'ընեն Հայոց տան մէջ մատուռն կամ պատարագատեղի մը ըլլալը.
բայց հաւանական յոյժ՝ մանաւանդ թէ անժխտելի որ կային հայ
եպիսկոպոս մը և հայազդի Եղբարք Ս. Յովհաննու. թուի թէ քահա-
նայք էին և յիշեալքն ի կտակին Գուլիելմ և Եզեկիէլ Եղբարք, ուր
և էր իրենց բնակութիւնը: Եւ թէպէտ յայտնի է յազգային յիշա-
տակարանաց որ այս կտակէն գրեթէ հարիւր տարի ետքը (4434)
պատարագ կը մատչէր ի տան Հայոց, բայց չենք կրկնար որոշ բան մը
զրուցել թէ պատարագի մատուցման տեղին արդեօք ի յատակի
տանն էր թէ ուրիշ սենեկի մը մէջ ի ստորին յարկի. և տեղւոյն
անձկութեան պատճառաւ կարելի չէր թաղել անդէն զմեռհալս,
որպէս սովոր էին առնել ի ժամանակին յայլ եկեղեցիս քաղաքին,
ինչպէս նաև ի մերն՝ յետ նորաշնութեանն: Թող որ յառաջ քան
զհաստատութիւն տանն Հայոց ի Ծիանեայ, յաւուրս ծերունի Հա-
յոյն և յառաջ իսկ քան զնա եղեր են ազգայինք մեր ի վենետիկ. և
փափաքելի է զիւտ վճռոյ ծերակուտին կամ եպիսկոպոսին Գաս-
դէլի, որով կը շնորհուէր Հայոց գերեզմանատեղի ի Ս. Գէորգ. ուր
ընդ համազգեացն ցանկացաւ ննջել զանհրաժարելի քունն և աղուս
այս Մարիամ, ընդ կանխեալսն անյայտս թուով և ընդ հետեալսն
յասպնջական և ի հիւրամեծար յայսմքաղաքի, որ ի զիրկս կակուղ

Հողոյն ամփոփեալ շտեմարանէ յոլովագոյն նշխարս հայութեան . յորոց հազարէն աւելի անուանց հանդիպեր եմք եկեղեցեաց մա . հացուցակ օրագրութեանց մէջ՝ ի բուն քաղաքին , ի կղզիս և մեր . ձակայսն . որոց ամենեցուն մազթեմք հանդիստ , ժամանելոցն ի նա . ւահանդիստն հասարակաց , որ հանէ յաշխարհն իրական և յան . փոփոխ :

ԴՐԱՆՍԻԼՈՒԱՆԻՈՅ ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՈԼԻՍ
ՔԱՂԲԻՆ ՀԱՅՈՅ ՕՐԷՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

Վիէննայի Միտարեան Հարց Հանդիսին թղթակիցը վերջի ա . տենները հրատարակեց Դրանսիլուանիոյ իղիսաբեթուպոլիս հայա . քաղաքին հրապարակական շէնքերուն արձանագրութիւնները¹ : —

Ունինք մենք ալ ձեռուընիս ուրիշ քանի մը — թէպէտ ոչ հրապարա . կական — պաշտօնական արձանագրութիւններ ու վճիռներու եւ ո . րոշումներու ժողովածոյք , որոնք Դրանսիլուանիոյ ազգայնոց ան . ցած դարու սովորութեանցը բարոյական կենաց և նոյն միջոցին հասարակ ժողովրդեան խօսած լեզուին վրայ առջեւնիս լուսաւոր . պատկեր մը կը դնեն :

Ինչպէս ամենուն յայտնի է՝ Եղիսաբեթուպոլսոյ քաղաքային վար . չութիւնը անցած դարուն առաջին կիսուն մէջ մէկ պիրովի (դատաւոր) և 42 աղաներու (խորհրդական) ձեռքն էր , որ օրինադիր , կարգա . զրիչ ու վճռատու իշխանութիւն մըն էր , թէ քաղաքային արտաքին օրինաց և թէ բարոյական գործառնութեանց նկատմամբ : Այս օրէ . նըսդիր ժողովը (գընած) իր մտադրութիւնը կը տարածէր ամէն տեսակ գործոց ու ամէն վիճակի անձանց վրայ :

Կը գտնենք հոս օրէնքներ , վճիռներ ու որոշմունքներ , ի մէջ այ . լոց՝ տօնական օրերը սուրբ բռնելու , եկեղեցի երթալու , իրիկուն . ները Հրեշտակ Տեառնէն ետեւ պանդոկները գինի շամելու , գաւա . զան կրելու , գինի և միս ծախելու , երբ և ինչ տեսակ զգեստ հագ . նելու , ուր , և ինչպէս տուն շինելու , եկեղեցական եւ աշխարհական պաշտօնատեարց տարեկան եկամուտը որոշելու , արգելանաց եւ զա . նազան դրամական պատիմներ ու տուգանքներ տալու վրայ , և այլն : Ասանկ օրէնսդրութեան մէկ երկու որոշում կ'ուզեմներկայ առ .

1. Տես «Հանդէս Աբովյայ» 1891 թիւ 2. գետք . էջ 53. Վիէննա: